ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԳԻՐԵԱՆ ՈՐ Ի ՆԻՍ, ՖՐԱՆՍԻԱ

Մեծարգոյ պրն. Չիլինգիրեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմ ողջոյնով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ հաւատաւոր մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ:

Հոգու խնդութիւն եւ զոհունակութիւն է Մեզ համար գնահատանքի խօսք ուղղել Ձեզ: Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել հանդիպել ու ճանաչել Ձեզ եւ հաղորդ դառնալ Ձեր հայրենասէր ու եկեղեցասէր ոգուն, որ սերնդէ սերունդ առաջնորդում է Ձեր հաւատաւոր ընտանիքին: Ուրախ ենք այսօր նշել, որ Դուք կեանքի ողջ ընթացքին ծնողաց օրինակով յետամուտ էք եղել ազգային խնդիրների լուծմանը, ձգտելով Ձեր օգտակարութիւնը բերել մեր ժողովրդին՝ որպէս պատմաբան, հրապարակախօս, ազգային ու հասարակական գործիչ:

Առանձնակի գնահատանքով ենք անդրադառնում, որ Դուք Հայրենի մեր երկրի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ հարազատ կապուածութիւնը արտայայտեցիք սրտաբուխ յանձնառութեամբ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին նուիրելով Ձեր մեծ ազգականի՝ հայ նշանաւոր բանաստեղծ ու բժիշկ, Յեղասպանութեան նահատակ, լուսահոգի Ռուբէն Սեւակի արխիւային նիւթերը եւ Ձեր նկարների արժէքաւոր հաւաքածուն: Ուրախ ենք մեծապէս, որ Մայր Աթոռում երջանկայիշատակ Ղազար Ա. Ջահկեցի Կաթողիկոսի կողմից 18-րդ դարում կառուցուած պատմական շէնքում շուտով իր դռները պիտի բացի Ձեր աջակցութեամբ նորոգուած ու կահաւորուած՝ Ռուբէն Սեւակի անուան թանգարանը, որը Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին ընդառաջ յարգանքի իւրօրինակ տուրք է նահատակ հայորդուն: Թանգարանը Սուրբ Էջմիածնի հազարաւոր այցելուներին նաեւ հնարաւորութիւն պիտի ընձեռի ծանօթանալու Հայոց Յեղասպանութեան տարիներին մեր ժողովրդի կրած տառապանքներին ու փորձութիւններին, որպէսզի հա-

մընդհանուր դատապարտման արժանանան նմանօրինակ ոճիրները ու առհասարակ բացառուեն մարդկութեան կեանքից:

Բարձր գնահատելով Ձեր եկեղեցանուէր բարի վաստակը եւ ծառայութիւնները մեր ժողովրդին, սիրով ընդառաջելով Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ եւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակաւ շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենահնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով երկնային օրհնութիւն, շնորհ ու ամենայն բարիք:

Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ. ԺԵ. 13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 687